ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Սույն թվականի հոկտեմբերի 6-ին Սովետական Միության արդարադատության մինիստր մեծահարգ Բորիս Վասիլևիչ Կրավցովը այցելություն տվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին և ծանոթացավ Ս. Էջմիածնի գանձերին, զրույց ունենալով նաև Արցախ—Ղարաբաղի հետ կապված հարցերի շուրջ:

Տիար Բ. Վ. Կրավցովը նաև փոխնախագահն է Արցախ—Ղարաբաղյան հարցերով զբաղվող կենտրոնական կառավարության հանձնաժողովի:

Միութենական հարգարժան մինիստրին ուղեկցում էին Սովետական Հայաստանի Մինիստրների խորհրդի նախագահ մեծահարգ Ֆաուզեյ Տաճատի Սարգսյանը և ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ հարգարժան Ստեփան Հմայակի Վարդանյանը:

Սույն ունկնդրությունը տեղի ունեցավ բարեկամական ջերմ մթնոլորտում:

* * *

Սույն թվականի նոյեմբերի 5-ին, ժամը 11-ին, Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետին այցելեց Սովետական Միությունում Բելգիայի դեսպան տիար Լյուկ Պյուտմանն իր տիկնոջ հետ:

Մեծարգո դեսպանը հանդիպում ունեցավ Վեհափառ Հայրապետի հետ: Հանդիպման ընթացքում տեղի ունեցավ զրույց՝ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի պատմական անցյալի և Արցախյան հարցի շուրջ:

Վեհափառ Հայրապետի հետ հանդիպումից հետո հարգարժան հյուրերը ծանոթացան Վեհարանի ու Գանձատան հարստություններին, եղան Մայր տաճարում:

ԹՂԹԱԿԻՑ